

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 48/1

13 նոյեմբերի 2012թ.

Քննարկվեց Արամ Մովսիսյանի 06.11.2012թ. դիմումով բերված գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ 19.09.2012թ. թիվ 2114793 ստուգման ակտի դեմ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ պետի 24.08.2012թ. թիվ 2114793 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմինն վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ Արամ Մովսիսյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման և օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում: Արդյունքում 19.09.2012թ-ին կազմվել է թիվ 2114793 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 342.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ Ա/Ձ Արամ Մովսիսյանի կողմից 2012թ. օգոստոսի 30-ին Վայք-Գորիս մայրուղու 6-րդ կմ-ի վրա գտնվող հանրային սննդի կետում իրականացվում էր հանրային սննդի ոլորտի գործունեություն 20 քմ սպասարկման ընդհանուր մակերեսի միջոցով: Ա/Ձ Արամ Մովսիսյանին պատկանող հանրային սննդի կետում բացակայում էր ՀԴՄ-ն:

Ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից Ա/Ձ Արամ Մովսիսյանին ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Ստուգմամբ պարզվեց, որ Ա/Ձ-ն չունի հարկային մամուլ սահմանված կարգով գրանցված և դրոշմավորված ՀԴՄ: Այսպիսով, Ա/Ձ Արամ Մովսիսյանի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշման 2-րդ կետի պահանջները: Համաձայն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի՝ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր լինելու դեպքում կանխիկ դրամով դրամական գործարքներ իրականացնելու վայրում հսկիչ դրամարկղային մեքենայի բացակայության համար ա/ձ-ն տուգանվում է 300.000 դրամի չափով:

Ակտի 2-րդ կետով հիմք ընդունելով «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի և 9-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 42.000 դրամ:

Արամ Մովսիսյանի գանգատում մասնավորապես նշված է.

Սույն թվականի օգոստոս ամսին Եղեգնաձորի ՏՀՏ հարկային տեսուչ Կ.Առաքելյանը առանց այցելելու ք.Վայք, Գորիս մայրուղու 7 կմ վրա գտնվող հանրային սննդի կետ արձանագրել է ՀԴՄ-ի ակտ Ա/Ձ Արամ Մովսիսյանի անունով: Սակայն նշված ձեռներեցի վկայականը 1998թ-ից կորել է, անգամ Հայաստանի Հանրապետություն օրաթերթում տպագրված է եղել այդ մասին: Բացի այդ, նշված հանրային սննդի կետը գրանցված է եղել Ա/Ձ Դոնարա Ղազարյանի անունով:

Արամ Մովսիսյանը խնդրում է հաշվի առնել, որ նշված օբյեկտը չի աշխատել, հարկային տեսուչն առանց այցելության արձանագրել է ՀԴՄ-ի ակտ չգործող և կորցրած անհատ ձեռներեցի անունով ու ակտը չեղյալ համարել:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), հաշվի առնելով Արամ Մովսիսյանի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց բերված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:

Համաձայն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի. «Հայաստանի Հանրապետության տարածքում անհատ

ձեռնարկատերերի, նոտարների, փաստաբանական գործունեություն իրականացնողների (այսուհետ՝ անհատ ձեռնարկատեր) և կազմակերպությունների կողմից առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատների միջոցով մանրածախ վաճառք իրականացնելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով իրականացվող դրամական հաշվարկների բոլոր դեպքերում (ներառյալ՝ կանխավճարները) հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր է, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի»:

Իր հերթին, ՀՀ կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀՀ հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոններ>-ի 2-րդ կետի համաձայն. <Օրենքով սահմանված ոլորտներում հսկիչ-դրամարկղային մեքենաների (այսուհետ՝ ՀԴՄ-ներ) պարտադիր կիրառմամբ գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը (այսուհետ՝ կազմակերպություն) առևտրական գործարքներ կատարելիս կամ ծառայություններ մատուցելիս դրամական հաշվարկները, բացառությամբ բանկային հաշիվների միջոցով կատարվողների, իրականացնում են ՀԴՄ-ի և միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանող ժապավենների միջոցով>:

Վերոգրյալ իրավանորմերից հետևում է, որ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր է տնտեսվարող սուբյեկտների կողմից մանրածախ վաճառք իրականացնելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս կանխիկ դրամով (պլաստիկ քարտերի միջոցով) իրականացվող դրամական հաշվարկների ընթացքում: Այսինքն, որպեսզի ապացուցված համարվի տնտեսվարող սուբյեկտի կողմից առանց հսկիչ-դրամարկղային մեքենայի կիրառման դրամական հաշվարկ կատարելու հանգամանքը, պետք է նախ ապացուցվի վերջինիս կողմից մանրածախ վաճառք իրականացնելու կամ բնակչությանը ծառայություն մատուցելու փաստը, քանի որ <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի <բ> կետի համաձայն, անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Հանձնաժողովը գտնում է, որ իրականացված ստուգմամբ չի հիմնավորվել Ա/Ձ Արամ Մովսիսյանի կողմից առանց հսկիչ-դրամարկղային մեքենայի կիրառման դրամական հաշվարկ կատարելու հանգամանքը, քանի որ մանրածախ վաճառք իրականացնելու կամ ծառայություն մատուցելու որևէ փաստ ստուգման ընթացքում չի արձանագրվել:

<<Հ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Ակտի նախագիծը ստուգում իրականացնող անձը 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ առարկություններ ներկայացնելու նպատակով: Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ակտի նախագիծը: Սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից առարկություններ չներկայացվելու դեպքում ստուգող մարմինը կազմում է ակտը և դրա մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, ժամկետի ավարտից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին>:

Քննարկվող դեպքում ստուգման ակտի նախագիծը կազմվել է 12.09.2012թ-ին, որը համաձայն գրանցման թիվ 072114271 անդորրագրի փոստային ծառայության միջոցով կողմին է ուղարկվել 14.09.2012թ-ին: Համաձայն փոստային ծառայության թիվ 072114271 ճանուցագրի, ակտի նախագիծն Արամ Մովսիսյանը ստացել է 19.09.2012թ-ին:

Ինչպես որ վերը նշվել է, <<Հ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը (կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը) 5 աշխատանքային օրվա

ընթացքում ուսումնասիրում է ակտի նախագիծը: Այսինքն, նշված ժամկետի սկիզբը պետք է հաշվարկվի առնվազն այն օրվանից, որ օրվանից, որ տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը փաստացի ստացել է ակտի նախագիծը:

Քննարկվող դեպքում ստուգման ակտը կազմվել է Արամ Մովսիսյանի կողմից ակտի նախագիծը ստանալու օրը՝ 19.09.2012թ-ին, այսինքն՝ խախտվել է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին (կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին) ակտի նախագիծը ուսումնասիրելու և առարկություններ ներկայացնելու համար օրենսդրությամբ սահմանված ժամկետը:


«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.»:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Ձեռյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ 19.09.2012թ. թիվ 2114793 ստուգման ակտը:



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ